

2009 H1N1 ԻՆՖԼՈՒԵՆՉԱՅԻ ՊԱՏՎԱՍՏ

**Չակտիվացված
("գրիպի սրսկում")**

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԴՈՒՔ ԻՄԱՆԱՔ

Պատվաստի Մասին Շատ Տեղեկություններ Կան Իսպաներենով Եւ Այլ Լեզուներով: Տես www.immunize.org/vis:

1 ԻՆՉ Ե 2009 H1N1 ԻՆՖԼՈՒԵՆՉԱՅԻ:

2009 H1N1 ինֆլուենզան (երբեմն կոչվում է Խոզի գրիպ) առաջանում է ինֆլուենզայի մանրէի նոր դեֆորմացիայից: Այն տարածվել է շատ երկրներում:

Գրիպի մյուս մանրէների նման, 2009 H1N1-ը տարածվում է մարդուց մարդ՝ հագից, փռոցից, եւ երբեմն մանրէով վարակված առարկաներին ձեռք տալուց:

2009 H1N1-ի նշանները կարող են ներառել.

- Հոգևածություն
- Տաքություն
- Կոկորդի ցավ
- Մկանային ցավեր
- Դող
- Հագ
- Փռոցուց

Որոշ մարդիկ ունենում են նաեւ փորհարություն եւ փսխուց:

Մեծ մասը լավ է զգում մեկ շաբաթվա ընթացքում: Բայց որոշ մարդիկ հիվանդանում են թոքերի բորբոքումով կամ այլ լուրջ հիվանդություններով: Որոշ մարդիկ պետք է հոսպիտալացվեն, եւ ոմանք մահանում են:

2 2009 H1N1-ը ինչպե՞ս է տարբերվում սովորական (սեզոնային) գրիպից:

Սեզոնային գրիպի մանրէները տարեցտարի փոխվում են, բայց դրանք սերտորեն կապակցված են իրար հետ:

Մարդիկ, ովքեր անցյալում վարակվել են գրիպով, սովորաբար որոշակի իմունիտետ ունեն սեզոնային գրիպի մանրէների հանդեպ (սրանց մարմինները մանրէների դեմ պայքարելու որոշ կարողություն են ձեռք բերել):

2009 H1N1 գրիպի մանրէն մանրէի նոր դեֆորմացիա է: Դա սեզոնային գրիպի մանրէից շատ տարբեր է:

Շատ մարդիկ 2009 H1N1-ի գրիպի նկատմամբ թույլ իմունիտետ ունեն կամ երբեք չունեն (սրանց մարմինները պատրաստված չեն մանրէի դեմ պայքարելու համար):

3 2009 H1N1 ինֆլուենզայի պատվաստը

2009 H1N1 ինֆլուենզայի դեմ պաշտպանվելու պատվաստները տրամադրվում են:

- Այս պատվաստները պատրաստված են ճիշտ սեզոնային գրիպի պատվաստների նման:
- Դրանք պետք է որ նույնքան ապահով եւ արդյունավետ լինեն, ինչպես սեզոնային գրիպի պատվաստները:
- Դրանք չեն կանխարգելի այլ մանրէների պատճառով «ինֆլուենզային նմանվող» հիվանդությունները:
- Դրանք չեն կանխարգելի սեզոնային գրիպը: **Եթե դուք ուզում եք պաշտպանված լինել սեզոնային գրիպից, ապա դուք պետք է նաեւ սեզոնային ինֆլուենզայի պատվաստ ստանաք:**

Չակտիվացված պատվաստը (պատվաստ, որի մեջ կա սպանված մանրէ) սրսկվում է մկանի մեջ, գրիպի տարեկան սրսկման նման: Այս թերթիկը նկարագրում է չակտիվացված պատվաստը:

Կենդանի, միջուկային պատվաստը (քթանցքի մեջ ցողվող պատվաստը) նույնպես տրամադրվում է: Այն նկարագրվում է առանձին թերթիկի վրա:

Որոշ չակտիվացված 2009 H1N1 պատվաստներ պարունակում են թիմերոգալ կոչվող պահպանիչը՝ բացիլներից հեռու պահելու համար պատվաստը: Ոմանք այն կարծիքն են արտահայտում, թե թիմերոգալը կարող է առընչություն ունենալ օթիզմի հետ: 2004 թվականին փորձագետների մի խումբ Բժշկության հետազոտություններում վերանայեց շատ աշխատություններ՝ քննարկելով այս տեսությունը եւ ոչ մի առընչություն չգտավ թիմերոգալի եւ օթիզմի միջեւ: Այդ ժամանակվանից ի վեր լրացուցիչ ուսումնասիրություններ եւս նույն եզրակացության են հանգել:

4 Ո՞վ պետք է ստանա 2009 H1N1 ինֆլուենզայի պատվաստ եւ ե՞րբ:

ՈՎ

Խմբերը, որոնց խորհուրդ է տրվում առաջինը ստանալ 2009 H1N1 պատվաստը, հետեւյալներն են.

- Հղի կանայք
- Մարդիկ, ովքեր ապրում են 6 ամսականից փոքր երեխաների հետ կամ խնամում են նրանց
- Առողջապահական եւ արտակարգ խնամքի բժշկական անձնակազմ
- 6 ամսականից մինչեւ 24 տարեկան որեւէ մեկը
- 25 տարեկանից մինչեւ 64 տարեկան որեւէ մեկը, ով որոշակի խրոնիկական առողջական վիճակ ունի կամ տկարացած իմունային համակարգ

Երբ պատվաստի ավելի շատ քանակ է տրամադրվում, հետեւյալ խմբերը նույնպես պետք է պատվաստվեն.

- 25 տարեկանից մինչեւ 64 տարեկան առողջ մարդիկ
- 65 տարեկան եւ ավելի մեծ չափահաս մարդիկ

Դաշնակցային կառավարությունը մատակարարում է այս պատվաստը՝ կամավորական հիմունքով ստանալու համար: Այնուամենայնիվ, նահանգային օրենքը կամ գործատերերը կարող են պահանջել որոշակի մարդկանց պատվաստումը:

ԵՐԲ

Պատվաստվիր անմիջապես, երբ պատվաստը տրամադրելի լինի:

Մինչեւ 9 տարեկան երեխաները պետք է ստանան պատվաստի երկու չափաբաժին, մոտ մեկ ամիս տարբերությամբ: Ավելի մեծ երեխաները եւ չափահասները կարիք ունեն միայն մեկ չափաբաժին:

5

Որոշ մարդիկ պետք է պատվաստ ստանան կամ պետք է սպասեն

Դուք պետք է ստանաք 2009 H1N1 գրիպի պատվաստը, եթե դուք ձեզ պատվաստի մեջ գտնվող բաղադրանյութերի նկատմամբ ծանր (կյանքի համար վտանգավոր) ալերգիա ունեք: *Ձեզ պատվաստող անձին տեղեկացրեք, եթե դուք որեւէ ծանր ալերգիա ունեք:*

- Լույսպես ասեք նրանց, եթե դուք երբեւիցե ունեցել եք.
 - Կյանքի համար վտանգավոր ալերգիկ ռեակցիա գրիպի սեզոնային պատվաստի չափաքանից ստանալուց հետո,
 - Guillain-Barré Սինդրոմ (ծանր անդամալուծող հիվանդություն, որը Լույսպես կոչվում է GBS):
- Սրանք կարող են պատվաստից խուսափելու պատճառներ չլինել, բայց բժշկական անձնակազմը կարող է օգնել ձեզ որոշում կայացնելու:

Եթե դուք չափավոր կամ ծանր հիվանդ եք, ձեզ խորհուրդ կտրվի սպասել մինչև ամողջանալը, նախքան դուք պատվաստ կստանաք: Եթե դուք թեթև մրսածություն կամ այլ թեթև հիվանդություն ունեք, սովորաբար սպասելու կարիք չկա:

Հղի կամ կրծքով կերակրող կանայք կարող են ստանալ չակտիվացված 2009 H1N1 գրիպի պատվաստ:

Զակտիվացված 2009 H1N1 պատվաստը կարող է տրվել այլ պատվաստների հետ միաժամանակ, ներառյալ սեզոնային ինֆլուենզայի պատվաստը:

6

Ի՞նչ են 2009 H1N1 ինֆլուենզայի պատվաստի վտանգները:

Պատվաստը մյուս դեղերի նման կարող է լուրջ պրոբլեմ առաջացնել, ինչպես ծանր ալերգիկ ռեակցիա: Բայց որեւէ պատվաստի՝ ծանր վնաս կամ մահ առաջացնելու վտանգը չափազանց փոքր է:

2009 H1N1 պատվաստի մեջ մանրէն սպանված է, այսպիսով դուք չեք կարող ինֆլուենզայով վարակվել պատվաստից:

2009 H1N1 պատվաստի վտանգները նման են սեզոնային չակտիվացված գրիպի պատվաստի վտանգներին.

- Թեթև պրոբլեմներ.**
- ցավ, կարմրություն, փափկություն կամ այտուցվածություն ասեղի տեղում
 - ուշաթափություն (զլխավորաբար դեռահասների մոտ)
 - գլխացավ, մկանային ցավեր
 - տաքություն
 - սրտխառնուք

Եթե այս պրոբլեմները չլինեն, սովորաբար դրանք կսկսվեն սրվելուց քիչ անց եւ կտեսն 1-2 օր:

Ծանր խնդիրներ.

- Պատվաստի հետեւանքով կյանքին սպառնացող ալերգիկ ռեակցիաները շատ հազվադեպ են: Եթե դրանք պատահեն, դա կլինի ներարկումից ընդամենը մի քանի րոպեից մինչև մի քանի ժամվա ընթացքում:
- 1976-ին չակտիվացված խոզի գրիպի պատվաստի նախնական տեսակը առընչեցին Guillain-Barré Սինդրոմի դեպքերի հետ (GBS): Այդ ժամանակվանից գրիպի պատվաստները որոշակիորեն GBS-ի հետ չեն առնչվել:

DCH-1471A
AUTH: P.H.S., Act 42, Sect. 2126.

7

Ի՞նչ անել ծանր ռեակցիայի դեպքում:

Ես ինչի՞ վրա պետք է ուշադրություն դարձնեմ:
Որեւէ անսովոր վիճակի, ինչպես բարձր տաքություն կամ վարքագծի փոփոխություն: Ծանր ալերգիկ ռեակցիայի նշաններ կարող են լինել ծանր շնչառությունը, խռչոտությունը կամ խոխոտը, ցաները, գունատությունը, թուլությունը, սրտի արագ բարբախումը կամ գլխապտույտը:

- Ես ի՞նչ պետք է անեմ:**
- **Չանգեք** բժշկին, կամ տվյալ անձին անմիջապես բժշկի տարեք:
 - **Ասեք** բժշկին ինչ է պատահել, դեպքի օրը եւ ժամանակը եւ պատվաստումը երբ է կատարվել:
 - **Խնդրեք** ձեր խնամատարին, որպեսզի ռեակցիայի մասին տեղեկագրի՝ լրացնելով Պատվաստի Հակազդեցություն Դեպքերի Տեղեկագրման Համակարգի (Vaccine Adverse Event Reporting System, VAERS) ձև: Կամ դուք կարող եք տեղեկագրը գրանցել VAERS կայքում www.vaers.hhs.gov հասցեով կամ զանգել **1-800-822-7967** համարով:

VAERS-ը բժշկական խորհուրդներ չի մատակարարում:

8

Պատվաստի վնասվածքի փոխհատուցում


Եթե դուք կամ ձեր երեխան պատվաստից ռեակցիա եք ունեցել, ապա դատի տալու ձեր հնարավորությունը սահմանափակվում է օրենքով:

Այնուամենայնիվ, ստեղծվել է դաշնակցային մի ծրագիր՝ վճարելու պատվաստից լուրջ ռեակցիա ունեցող որոշ մարդկանց բժշկական խնամքի եւ այլ հատուկ ծախսերի համար: Այս ծրագրի մասին հավելյալ տեղեկություններ իմանալու համար զանգեք **1-888-275-4772** համարով կամ այցելեք ծրագրի կայքը՝ www.hrsa.gov/countermesasurescomp/default.htm:

9

Ինչպե՞ս կարող եմ ավելի տեղեկություն ունենալ:

- Հարցրեք ձեր խնամատարին: Նրանք կարող են ձեզ տալ պատվաստի փաթեթի ներդիրը կամ առաջարկել տեղեկության այլ աղբյուրներ: **1-888-767-4687**
- Չանգեք ձեր տեղական կամ նահանգային բաժանմունք:
- Կապվեք Հիվանդությունների Կառավարման եւ Կանխարգելման Կենտրոնների հետ (CDC).
 - Չանգեք **1-800-232-4636 (1-800-CDC-INFO)** կամ
 - Այցելեք CDC-ի կայքը՝ www.cdc.gov/h1n1flu կամ www.cdc.gov/flu
- Այցելեք կայքը՝ www.flu.gov



DEPARTMENT OF HEALTH AND HUMAN SERVICES
CENTERS FOR DISEASE CONTROL AND PREVENTION

Vaccine Information Statement 42 U.S.C. §300aa-26
2009 H1N1 Inactivated Influenza Vaccine IMM-980AN – Armenian (10/2/09)
Translated by Transcend Translations, Davis, CA www.transcend.net

Բժշկական խնամք ապահովողներին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ եւ հետագա պատվաստումների առաջադրված գրաֆիկը, տեղեկությունները կողարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն: